



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի փաստաբան
Անի Հալույանին
Ք.Էջմիածին Աբովյան փողոց 41/1**

Ի պատասխան Ձեր 31.03.2021թ գրության հայտնում ենք, որ <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, որպես մարզպետի ընդհանուր լիազորություններ, Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով: Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ մարզպետը մարզի տարածքում Կառավարության տարածքային քաղաքականությունն, ի թիվս այլնի, իրագործում է նաև գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառում: Իսկ նշված լիազորությունները հստակ սահմանված են <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով:

Նշված իրավակարգավորումները հիմք ընդունելով՝ տեղեկացվում է, որ Ձեր կողմից ներկայացված հարցադրումը, մարզպետի լիազորություններից դուրս է: Դուք կարող եք դիմել համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության:

Գլխավոր քարտուղար՝

Ա.Հովհաննիսյան

Կատ.Ա. Այվազյան

01.04.2021

VERIFIED OCSP 01.04.2021 11:02:19 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

